



Արտադրության էկոնոմիկա և կազմակերպում

ՏՈՒՖԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տնտեսագիտական գիտությունների բեկնածու

Հայաստանում իբրև հիմնական որմնանյութ հանդիսանում է տուֆը։ Սակայն նրա ինքնարժեքը դեռևս շարունակում է բարձր մնալ, որը բացատրվում է ազդում շինարարական աշխատանքների արժեքի վրա։ Դրա համար այդ շինարարական նյութի արդյունահանման ձեռնարկություններում անհրաժեշտ է կիրառել մի շարք միջոցառումներ, որոնք տեղիված լինեն նրա ինքնարժեքի իջեցմանը։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռեսպուբլիկայի քարհանքերում լեռնային աշխատանքները վերին աստիճանի թույլ են մեքենայացված։ Գոյություն ունի այն կարծիքը, որ իբր քարհանքերի մեքենայացումը կթանկացնի տուֆի արտադրությունը և կավելացնի նրա մնացուկները։ Սակայն տվյալները բոլորովին այլ բան են ասում։ Այսպես, 1957 թվականին, Արթիկտուֆի տեխնիկայի ամենից ավելի հազնեցված № 7 քարհանքում 1 մ³ տուֆի ինքնարժեքը 3 ռուբլի 74 կոպեկով ցածր էր, քան № 1 քարհանքում, որտեղ դեղակշռում է ձեռքի աշխատանքը։ Քարհանքի մեքենաների արմատավորման տրնտեսական նպատակահարմարության մասին է խոսում նաև մյուս ռեսպուբլիկաների տեխնիկայի լավ հազնեցված քարհանքերի փորձը։ Օրինակ, Ադրբեջանական ՍՍՌ-ի Ղարադաղի շրջանի

քարահանքերում 1 մ³ տուֆի ինքնարժեքը չի գերազանցում 25—26 ռուբլուց, մինչդեռ Արթիկտուֆում այն կազմում է 45—46 ռուբլի։ Բացի այդ, քարահան մեքենաների միջոցով արտադրված ուղիղ ձևի քարերը հետագա վերամշակման չեն ենթարկվում, դրանով իսկ զբաղիորեն է ժամացնելով շինարարական աշխատանքները։ Հաշվված է, որ տուֆի արտադրության աշխատատար պրոցեսների լայն մեքենայացումը ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությանը կտա տարեկան միլիոնավոր ռուբլիների տնտեսում։

Իհարկե, բավական լուրջ է տուֆի այն մնացուկների հարցը, որոնք մեքենայացման արմատավորումից հետո ավելի կշատանան։ Սակայն այդ մնացուկները կարելի է օգտագործել արհեստական տուֆաբլոկների, շինարարական ավազի, խճի և այլ նյութերի արտադրության համար։ Գոյություն ունի այն կարծիքը, որ իբր արհեստական տուֆաբլոկների կիրառումը չի կարող տնտեսական էֆեկտ տալ։ Մինչդեռ եղած տվյալներն ասում են այն մասին, որ տնտեսապես նա իրեն կարողացնի։ Ստորև բերվում են տվյալներ¹, որոնք ցույց են տալիս արհեստա-

¹ Տվյալները վերցված են Շինարարական նյութերի և կառուցումների ինստիտուտից։

կան տուֆաբլոկների կիրառման էֆեկտիվությունը շինարարության մեջ:

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ 1

№ ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Պատր. լայ- նությունը (սմ)	Արժեքը (տոմս. և կոպեկով)
1	2	3	4	5
1.	Տուֆից անսվաղ շարվածք .	Քառ. մետր	50	73—77
2.	Արհեստական լիքը տու- ֆաբլոկից շարվածք . . .	»	40	67—74
3.	Մնամեջ արհեստական տու- ֆաբլոկից շարվածք . . .	»	40	53—37
4.	Խոշոր բնական տուֆաբլո- կից շարվածք	»	40	110—60
5.	Միդիսային շարվածք . . .	»	55	150—40
6.	Արհեստական լիքը տուֆա- բլոկից երեսապատված շարվածք	»	55	121—04
7.	Մնամեջ արհեստական տու- ֆաբլոկից երեսապատված շարվածք	»	55	106—67

Արտադրության մեջ քարահատ մեքենաների արմատավորումը կնպաստի նաև մշտական բան-
վորական կադրերի ստեղծմանը, որը մեծ նշա-
նակություն ունի աշխատանքի արտադրողակա-
նություն բարձրացման և արտադրանքի ինքնար-
ժեքի իջեցման համար: Շինարարական քարի
արտադրության մեքենայացման անհրաժեշտու-
թյունը բխում է նաև շինարարական ինդուստրիա-
յի զարգացման պահանջներից: Արդյունաբերա-
կան ու բնակարանային շինարարության ասպա-
րեզում տարեցտարի ավելի լայն մասշտաբնե-
րով են կիրառվում առաջավոր ինդուստրիալ մե-
թոդները, որոնք անհամեմատ արագացնում են
շինարարական աշխատանքների տեմպերը: Մինչ-
դեռ տուֆի արդյունահանման աշխատանքները
ձեռքով են կատարվում: Այսպիսով, ստեղծվում
է հակասություն շինարարական ինդուստրիայի և
նրա հումքային բազայի՝ շինարարական քարի
արտադրության միջև:

Մեքենայացման բացակայության հետևանքով
ձեռքով են կատարվում բեռնաբարձման և բեռ-
նաթափման աշխատանքները, որոնք պահանջում
են աշխատանքային մեծ ծախսեր: Այդ պրո-
ցեսների մեքենայացման համար անհրաժեշտ է
անցնել կոնստրուկցիային փոխադրումներին, որոնք

հնարավոր են միայն տալիզ ձևի տուֆաքարերի
արտադրությանն անցնելուց հետո: Կոնստրուկցի-
ային փոխադրումները սովորական փոխադրում-
ների համեմատությամբ տևեն մի շարք առավել-
ություններ: Նրանց կիրառումը բարձրացնում է
վազոնների բեռնատարողության օգտագործման
գործակիցը, որի շնորհիվ կրճատվում է տուֆի
սվլալ քանակի փոխադրման համար անհրաժեշտ
վազոնների թիվը, բեռնաբարձման ու բեռնա-
թափման աշխատանքների աշխատանքային ժա-
մանակը, ինչպես նաև այդ արտադրական պրո-
ցեսների վրա կատարվող դրամական ծախսում-
ները:

Աշխատանքի արտադրողականության բարձ-
րացման և տուֆի ինքնարժեքի իջեցման գործում
մեծ նշանակություն ունի ոչ միայն տեխնիկա-
կան հագեցվածությունը, այլև եղած սարքավոր-
ման լրիվ ծանրաբեռնվածությունը: Տուֆի ար-
դյունահանման ձեռնարկություններում մեքենա-
ներն ու մեխանիզմներն օգտագործվում են ոչ
լրիվ կարողությամբ, թույլ են տրվում պարա-
պուրդներ: Բերենք Արթիկտուֆի օրինակը.

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ 2

№ ը/կ	Մեքենաների և մեխանիզմների անվանումը	Օգտակար գործո- ղության գործա- կիցը %	պլանով փաստորեն
1.	Սկրեպեր	83,5	78,3
2.	Բուլդոզեր	73,0	70,0
3.	Ինքնավերամբարձիչ	67,6	64,6
4.	Ներհատիչ մեքենա ԿՄՊ-2	70,4	55,4
5.	Ներհատիչ մեքենա ԿՄՍ-11	70,8	55,7
6.	Փարհատիչ մեքենա ԿՄՍ-11Ա	64,7	61,7
7.	Փարհատ մեքենա ՍՄ-428	75,6	72,6
8.	Ավտոմեքենա ԳԱԶ-51	90,4	80,4

Այս աղյուսակի ցուցանիշներից երևում է, որ
Արթիկտուֆում մեքենաների ու մեխանիզմների
պարապուրդները զգալի չափերի են հասնում:
Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պա-
րապուրդները մեծ մասամբ առաջ են գալիս
պահանջատման բացակայությունից, տեխնի-
կայի վերանորոգման ժամկետների խախտում-
ներից:

Աշխատանքի արտադրողականության բարձ-

բացումն ու արտադրանքի ինքնարժեքի իջեցումը կախված են նաև հիմնական և օժանդակ արտադրական պրոցեսներում զբաղված բանվորների թվական հարաբերակցությունից: Որքան փոքր է օժանդակ պրոցեսներում զբաղված բանվորների թիվը, այնքան բարձր է աշխատանքի արտադրողականությունն ու ցածր՝ արտադրանքի ինքնարժեքը, և ընդհակառակը:

Իսկ սոուֆի արտադրության ձեռնարկություններում դեռևս չափազանց մեծ է օժանդակ պրոցեսներում զբաղված բանվորների թիվը, որը նույնպես բացատրվում է քարհանքերի անբավարար մեքենայացմամբ: Նրանք կազմում են բանվորների ընդհանուր թվի մոտավորապես 50%-ը:

Տուֆի ինքնարժեքի իջեցման մյուս կարևորագույն գործոնը խնայողության ռեժիմի ու տնտեսաշվարկի ամրապնդումն է: Տուֆի արտադրության ձեռնարկություններում թույլ է տրվում խոշոր չափերի հասնող դրամական ու նյութական միջոցների գերաժախս, որի վերացումը կիջեցնի արտադրանքի ինքնարժեքը և կավելացնի ներադրված արժեքի դրամական կուտակումները:

Տուֆի ինքնարժեքում տեսակարար կշռի մեծ մասը կազմում է աշխատավարձը: Այսպես, օրինակ, Արթիկտուֆում այն հասնում է մոտավորապես 65%-ի: Հետևաբար, աշխատավարձի ֆոնդի խնայողաբար ծախսումը ըստ սահմանված նորմաների, կնպաստի արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում Լենինականի և Անիտուֆի հանքվարչությունները գերակատարեցին համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի իջեցման առաջադրանքը, իսկ ամբողջ ապրանքային արտադրանքի ինքնարժեքի իջեցման գծով հասան զգալի դրամական գումարների տնտեսման: Այդ ձեռք է բերվել աշխատավարձի ֆոնդի խնայողաբար ծախսման շնորհիվ: Այսպիսով տնտեսվել է 178 հազար ռուբլի: Միաժամանակ պետք է նշել, որ առանձին ձեռնարկություններ թույլ են տալիս աշխատավարձի ֆոնդի գերաժախս, որին մասամբ նպաստում է վարձագների մեծ թիվը՝ պայմաններ ստեղծելով հավելագրումների համար: Բավական է ասել, որ առանձին տեսակի աշխատանքների վարձագների թիվը հասնում

է մինչև 18-ի: Ուստի անհրաժեշտ է վերանայել և կրճատել գոյություն ունեցող վարձագները:

Տուֆի ինքնարժեքում զգալի տեսակարար կշիռ ունեն վերադիր ծախսերը: Արտադրանքի մեկ միավորին ընկնող այդ ծախսերի գումարը կախված է արտադրության մասշտաբներից: Որքան մեծ է արտադրության ծավալը, այնքան քիչ վերադիր ծախսեր են ընկնում արտադրանքի յուրաքանչյուր ռուբլուն: Դա երևում է 1958 թվականի առաջին կիսամյակի ստորև բերված աղյուսակից:

Աղյուսակ 3

№ ը/հ	Անվանումը	Արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ընդհանուր գործարանային ծախսերը (կոպ.)
1.	Լենինականի հանքվարչություն	1,0
2.	Անիտուֆի հանքվարչություն	2,4

Ինչպես երևում է բերված թվերից, Լենինականի հանքվարչությունում, որի արտադրանքի ծավալը մոտ 3 անգամ գերազանցում է Անիտուֆի արտադրանքից, արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ընդհանուր գործարանային ծախսերը 1,4 կոպեկով ավելի ցածր են:

Որոշ ձեռնարկություններում, ինչպես, օրինակ, Արթիկտուֆում և Կիրովականի հանքվարչությունում, առանց անհրաժեշտության պահվում են չափազանց փոքր արտադրական միավորներ՝ քարհանքեր ու ցեխեր. այդ ավելացնում է արտադրության դեկավայրման ու տպասարկման ծախսերը և դրանով իսկ բարձրացնում արտադրանքի ինքնարժեքը: Ուստի անհրաժեշտ է լրջորեն մտածել այդ արտադրական միավորների խոշորացման մասին:

Տուֆի արտադրության ձեռնարկություններում ամեն տարի ծախսվում են հսկայական քանակությամբ պահեստամասեր, որոնք պայմանավորված են լեռնային արդյունաբերության առանձնահատկությամբ: Հասկանալի է, որ ներսանց խնայողաբար ծախսումը կարող է տուֆի ինքնարժեքի իջեցման լուրջ գործոն լինել: Մեքենաների պահեստամասերի ծախսման հաշվառման գոյություն տանցող սխառմը չի նպաստում նրանց խնայողաբար օգտագործմանը:

Պահանջագրերի համաձայն ցեխերին բաց են թողնվում պահեստամասեր, որոնք օգտագործվում են վերանորոգման և շարքից դուրս եկած մասերի փոխարինման համար: Սակայն ինչքանակությամբ պահեստամասեր են ծախսվել մեկ ամսում տվյալ մեքենայի վրա կամ տվ. է ծախսել, դա ոչ տքի հայտնի է: Պահեստամասերի հաշվառման աղբյուրի սխառեմի դեպքում հնարավոր են մեծ գերաժախտումներ: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է անցնել կատարագրված պահեստամասերի ծախսման խիստ հաշվառմանը: Այդ նպատակով հաշվառման քարտերում պետք է ցույց տրվեն մեքենայի տիպը և համարը, մեքենավարի անունն ու ազգանունը, դատան, տահմանված նորման և փաստացի ծախսումը, տնտեսման կամ գերաժախտի դրամարը և այլն: Աղբյուրի հաշվառումը, անկատարած, կատարողի պահեստամասերի խնայողաբար օգտագործումը: Անհրաժեշտ է նույնպիսի հաշվառում տահմանել նաև գործիքների ծախսման համար:

Սակայն այդ միջոցառումները կարող են էֆեկտիվ լինել միայն նորմատիվային տնտեսությունը կարգավորելու դեպքում: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի տվյալ քարհանքում ձեռնարկությունները նախօրոք պլանավորեն արտադրանքի մեկ միավորի արտադրությանն ընկնող նյութական ծախսումները: Անհրաժեշտ է նույնպես յոգաբանչուր ցեխի (քարհանքի) համար, նրանց արտադրական պայմաններին համապատասխան, նախատեսել պլանային ինքնարժեքը:

Տուֆի ինքնարժեքի իջեցման համար մեծ նշանակություն ունի ներգործարանային տրանսպորտի ռացիոնալ օգտագործումը: Շատ ձեռնարկություններում ավտոմեքենաների զգալի մասը երկար ժամանակ պարապուրդներ է տալիս, թույլ են տրվում բենզինի և այլ նյութերի գերաժախտեր: Մեծ մասամբ դա բացատրվում է նրանով, որ հանքվարչությունների ճանապարհները, չնչին բացառությամբ, գյուղական են և, հետևաբար, դժվարանցանելի, որը հաճախակի մեքենաների կոտրվածքներ է առաջացնում: Այդ ճանապարհների բարելավումը իր հերթին կհանդիսանա տուֆի ինքնարժեքի իջեցման լուրջ գործոն:

Խնայողության ուժեղացումը ամրապնդման համար ոչ պակաս նշանակություն ունի քարհանքերի պլանային օգտագործումը, որը կապահովի տնտեսության ռացիոնալ օգտագործումը և կկրճատի նրանց շահագործման ծախսերը: Չնայած դրան, մի շարք ձեռնարկություններ մինչև այժմ էլ աշխատում են առանց նախօրոք մշակված պլանի ու նախագծի: Այդ դրությունը գոյություն ունի, օրինակ, Արթիկտուֆի որոշ քարհանքերում և Կիրովականի հանքվարչությունում:

Տուֆի ինքնարժեքի իջեցումն ունի ժողովրդագատնտեսական խոշոր նշանակություն: Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի լրիվ օգտագործվեն տուֆի ինքնարժեքի իջեցման գոյություն ունեցող ուղիները և բոլոր ձեռնարկությունները հասնեն բարձր շահութաբերության:

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՊԼԱՆԸ

Ս. ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

Հայկ. ՍՍՌ Ժողտնտխոհի պլանա-տնտեսական բաժնի պետ

Ժողտնտխոհների մեկ տարվա աշխատանքը գործնականորեն ապացույցեց արդյունաբերություն և շինարարության կառավարման նոր ձևերի հսկայական ու անվիճելի առավելությունները և դրա հետ միասին բացահայտեց պլանավորման

ման թերությունները: Աշխատանքի արդյունքները ցույց տվեցին առավել խոցելի օղակները պլանային աշխատանքի կազմակերպման գործում:

Այս հոգվածում, որքան թույլ է տալիս ձեռ-